

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՌԱՏՈՒՆԿ ԾՐԱԳԻՐ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԿԸ
ՆԱԽԱՏԵՍԷ ԾԱՌԱՏՆԿՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ (1954-2007) ՅԻՇՆԱՍԿԻՆ**

Պոլսահայ խմբագիր-լրագրող Հրանդ Տինքի ողբերգական մահէն ետք, խումբ մը բարերարներ «Հայաստանի Ծառատունկ ծրագիր» բարեսիրական հիմնադրամին առաջարկեցին ծառատնկում կատարել Տինքի յիշատակին:

Նախորդ շաբաթներուն տեղի ունեցած Պոլսոյ «Ակօս» երկլեզու թերթի խմբագիր Հրանդ Տինքի ողբերգական մահը ցնցեց եւ խոր վիշտով պատեց համայն հայութիւնը՝ Պոլիսէն մինչեւ Կլէստըլ: Թուրքիոյ մէջ գործող 301 յօդուածին հիման վրայ «թրքական ինքնութիւնը վիրաւորելու համար» դատապարտուած Հրանդ Տինք Մեծ Եղեռնին մասին բացայայտ կերպով խօսելուն համար ամիսներ շարունակ մահուան սպառնալիքներ կը ստանար թուրք աջակողմեան ազգայնամոլներէն: 19 Յունուարին երիտասարդ մը սպառնալիքը գործնականացուց՝ կռնակէն քանի մը անգամ կրակելով Տինքի գլխուն:

Սպանութիւնը միջազգային մակարդակի վրայ զայրոյթ եւ նոյն ատեն կարեկցանք յառաջացուց: 23 Յունուարին ակելի քան 100 հազար անձեր մասնակցեցան Թուրքիոյ մէջ տեղի ունեցած Հրանդ Տինքի յուղարկաւորութեան: Պոլսոյ փողոցներէն անցնելով, «Մենք բոլորս Հրանդ ենք» նախադասութիւնը կրող ցուցատախտակներ բռնած անոնք կը բացականչէին՝ «Մենք բոլորս Հրանդ ենք, մենք բոլորս հայ ենք»: Հրանդ Տինքի մասին մանրամասն տեղեկութիւններ ունենալու համար այցելել www.hrantdink.org կայքէջը:

Հրանդ Տինք իր հիմնած թերթը կոչած էր «Ակօս»: «Ակօսը սերտօրէն կապ ունի ծառ տնկելու գործընթացին հետ: Թերթին անունը ոգեւորեց նուիրատուները, որոնք նիւթական սկզբնական յատկացումը ապահովեցին Հրանդ Տինքի յիշատակին ծառատնկում կատարելու համար», - ըսաւ «Հայաստան Ծառատունկ ծրագիր» բարեսիրական հիմնադրամի գործադիր յանձնաժողովի անդամ Նենսի Գրիգորեան:

Ուղթըրթաուն - Երեւան քաղաքներուն մէջ գործող եւ ոչ շաբափեր «Հայաստան Ծառատունկ ծրագիր» բարեսիրական հիմնադրամը (որուն պաշտօնական անունը «Էյ. Թի. Փի.» բարեսիրական հիմնադրամ է) իրականացուցած է բնապահպանական կենսական ծրագիրներ՝ Հայաստանի բնութենէ աղքատացած եւ կանաչութենէ լերկ դարձած տարածքներուն մէջ. ան նաեւ կարիք ունի օժանդակողներու՝ անտառներու եւ պարտէզներու վերակենդանացան առաքելութեան իրականացման համար:

1994 թուականէն ի վեր «Հայաստան Ծառատունկ ծրագիր» մեծ յաջողութիւններ արձանագրած է կենսաբազմազանութեան Կովկասեան տարածաշրջանին մէջ անապատացման դէմ պայքարի ծիրին մէջ: Անոր կողմէ արդէն տնկուած կամ վերակենդանացուած են 1,5 միլիոն ծառ, բացուած են հարիւրաւոր աշխատանոցներ, որոնք կը ծառայեն եղանակային ծառերու վերականգնման ծրագիրներու իրականացման: Մանրամասն տեղեկութիւններ ստանալու եւ Հրանդ Տինքի նուիրուած ծառատնկումին աջակցելու նպատակով այցելեցէք www.ArmeniaTree.org կայքէջը: